# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 63

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ*
*ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Մինչ օրակարգի քվեարկությունը, համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը, հաշվի առնելով հարցի կարևորությունը, առաջարկեց 10-րդ հարցի մեջ ներառել նաև մոտ 6,77հա հողատարածքի նպատակային նշանակության հարցը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

3. Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

4. «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*

5. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/*

6. Երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/*

7. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

8. Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա և Ավան բնակավայրերում փողոցի և փակուղու համարակալման մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

9. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Կարբի և Ուջան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

13. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4 հոդվածի պահանջներով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի N 07-Լ հրամանով հաստատված ուղեցույցի դրույթներով, հաստատել Աշտարակ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը՝ համաձայն հավելվածի:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 3</u> - Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածների պահանջներով, ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 23.05.2018թ. N 3-Ա որոշումը: Հաստատել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի և համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

**22 – ԿՈՂՄ, 1-ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 4</u> - «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության,

մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման հավելված 28-ը շարադրել նոր խմբագրությամբ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Մ. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 5* - *Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ծառահատում կատարելու վերաբերյալ Արամ Ղազարյանի 12.01.2026թ. թիվ 258 դիմումը և համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի ուսումնասիրությունը, ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյան 4 հասցեի դիմաց գտնվող չորացած եղևնին կտրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Մ. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 6* - *Երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «ԲԱԶԱԼՏ ՊՐՈ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Ավետիսյանի 16.10.2025թ. /մուտքի թիվ 13668/ գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի

վարչական տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 7* - *Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Անահիտ Ավետիսյանի 30.01.2026թ. N 1175 դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 5-րդ փողոց, 1-ին նրբանցք, N 28 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-058-0018-0046/, Անահիտ Պարույրի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող 1726քմ բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը փոխանակել համարժեք, համայնքային սեփականություն հանդիսացող 02-058-0018-0071 ծածկագրով, Կարբի բնակավայրի 5-րդ փողոց, 7-րդ փակուղի N 6/1 հասցեում գտնվող 1700քմ բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հետ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 8* - *Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա և Ավան բնակավայրերում փողոցի և փակուղու համարակալման մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում գտնվող փողոցին տալ 16 համարը և հասցեն համարել՝

***- Աշտարակ համայնք, Նոր Եդեսիա բնակավայր, 16-րդ փողոց:***

2. Աշտարակ համայնքի Ավան բնակավայրի 1-ին փողոց, 7-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 3 համարը և հասցեն համարել՝

***- Աշտարակ համայնք, Ավան բնակավայր, 1-ին փողոց, 7-րդ նրբանցք, 3-րդ փակուղի:***

3. Նոր Եդեսիա և Ավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 9</u> - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ժորա Ալեքսանյանի ներկայացուցիչ Ազատ Հովհաննիսյանի 25.11.2025թ. N 17024, «ԳՐԻՆՊԱՐՏԵԶ» ՍՊԸ-ի տնօրեն Հենրիկ Սարգսյանի 15.01.2026թ. N 487, Արա Մանուկյանի ներկայացուցիչ Արմեն Շահբազյանի 16.01.2026թ. N 573, «ԴԵՂՁԵՆԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հայարփի Աբգարյանի 19.01.2026թ. N 622, Գարիկ Սարուխանյանի 22.01.2026թ. N 817, Վարուժան Մուրադյանի ներկայացուցիչ Գագիկ Մաթևոսյանի 22.01.2026թ. N 822 և Ռոման Վիրաբյանի ներկայացուցիչ Դավիթ Գասպարյանի 26.01.2026թ. N 1067՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի 02-017-0160-0280 ծածկագրով, «ԳՐԻՆՊԱՐՏԵԶ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,26853հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական

օբյեկտների /գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/:

2. Աշտարակ համայնքի Արուճ բնակավայրի 02-022-0151-0046 ծածկագրով, «ԴԵՂՁԵՆԻ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,13898հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/:

3. Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի 02-095-0228-0029 ծածկագրով, Վարուժան Գուրգենի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող 0,636հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0503-0001 ծածկագրով, Ռոման Արայիկի Վիրաբյանին և Զոհրաբ Արայիկի Վիրաբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,522հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/:

5. Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրի 02-108-0232-0128 ծածկագրով, Ժորա Սոսի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 2,79954հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,2463հա արոտավայրի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/:

6. Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0228-0001 ծածկագրով, Արա Վահրամի Մանուկյանին և Գոռ Մնացականի Արշակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,242հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

7. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0698-0020 ծածկագրով, Գարիկ Շիրինի Սարուխանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,06609հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/:

**21 – ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Գ. Արշակյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 10</u>* - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Կարբի և Ուջան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.12.2025թ. N 2/փ-420, N 2/փ-421 և N 2/փ-435, 29.12.2025թ. N 2/փ-443 և 23.01.2026թ. N 1/փ-3 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Կարբի և Ուջան բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման, «Տեղական

ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0411-0060 ծածկագրով 0,0799հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0422-0027 կադաստրային ծածկագրով 0,003հա մակերեսով բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-058-0303-0029 ծածկագրով 18.47973 հա հողամասից 0.20804հա արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Ուջան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-109-0223-0110 ծածկագրով 0,0976հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0639-0059 ծածկագրով 0,51448հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /0,4712հա-հնդավոր և 0,04328հա-այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական

նպատակային նշանակության 02-001-0684-0058 ծածկագրով 6,77212 հա արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

7. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի, Ղազարավան, Կարբի և Ուջան բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 11</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Միշա Մկրտչյանի 14.01.2026թ. N 445 և «ՔՐԵՅՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Համբարձումյանի 23.01.2026թ. N 976 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրների փողոց, N 9/2 հասցեում գտնվող, 02-001-0139-0127 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 198քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0139-0128 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Միշա Վահագնի Մկրտչյանին:

2. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-068-0421-0090 ծածկագրով 0,15հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 525 000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքով

օտարել կից՝ ընդլայնվող 02-068-0421-0088 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր «ՔՐԵՅՖԱՐՄ» ՍՊԸ-ին:

**21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Մ. Մկրտչյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 12</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 13</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2026 թվականի մարտի 10-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2026 թվականի փետրվարի 10-ին:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | __________________ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | __________________ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | __________________ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | __________________ |
| ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ | __________________ |
| ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ | __________________ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | __________________ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | __________________ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | __________________ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | __________________ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | __________________ |
| ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ | __________________ |
| ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ | __________________ |
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | __________________ |
| ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ | __________________ |
| ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | __________________ |
| ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ | __________________ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | __________________ |
| ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ | __________________ |
| ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ | __________________ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | __________________ |
| ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ | __________________ |
| ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | __________________ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

<u>ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝</u>
<u>ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ</u>
<u>ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ</u>